Հայ գրականություն, Արձակ, Պատմվածք

13+

ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆ

ԾԻԼՆ ՈՒ ԱՊԱՌԱԺԸ

Իմ փոքրիկ աղջկան պատմածս զրույցներից

1

Բարձրացավ դաժան, ցրտաշունչ քամին:

Աշունն էր գալիս:

Ծառերը դեղնել-դողդողում էին, տերևաթափ լինում: Տերևները մեռած, ծանր օրորվում, միմյանց հետևից գետին էին ընկնում և պարտեզ, անտառ, գերեզման դարձնում:

Սուրում էր քամին դաշտ-ձորի վրա, սողում խոտի մեջ, լեռ-անտառ ելնում, ամեն ինչ ցնցում, ամեն բույս փետում:

Փետում, ցրիվ էր տալիս սիրուն թերթիկներ անուշ ծաղիկներից, դեսուդեն նետում ծառ-ծաղկի վրա ծնած հատիկներ, ամբարված սերմեր:

Օդը լցված էր թռչկոտող, ոստնող, վազող ու քշվող գույն-գույն թերթերով, մանրիկ սերմերով:

Եվ որքան շա՛տ էին նրանք, այդ հատիկները, մեծ, փոքր, զանազան ձևի, թևով, փշփշոտ, պայթող ու ժայթքող և ամեն տեսակ ճանապարհորդելու հաջող միջոցներով:

Քամին նրանց խլում էր մանր ցողուններից, կորզում անխնա հայրենի տնից: Տանում էր, հեռացնում, սարեսար նետում, քարեքար խփում:

Եվ սերմերը գնում էին, ամեն տեղ մտնում, ամեն տեղ ընկնում:

Ամեն մեկը նրանցից մի կտոր էր որոնում, պահվում էր առայժմ, որ երբ գարունը գար, գուցե կարողանար ծլել, ծառ-ծաղիկ դառնալ, անտառ ու պարտեզ նորից զարդարել:

2

Եվ ահա այն սերմերից մեկն էր նույնպես այն հատիկը, որ մի ծառից կորզվեց, քամին նրան սարից սար գլորեց, շպրտեց-հանեց մեծ ապառաժի գլխին, կոխեց մի նոր ճեղքի մեջն ու թողեց գնաց:

Սերմը մնաց այնտեղ, ժայռի չոր կրծքին: Օ՛հ, ինչպես կարծր էր խորշը, ինչպես չո՛ր էր ու նեղ: Ապառաժն էլ, լերկ, դաժան, լուռ և կնճռոտ:

Կոթնել էր նա իր նման անթիվ ժայռերի. ավելի ցածր աչք կտրելու չափ, ո՛չ մի կանաչ և ո՛չ մի հատ ծառ, այլ ժայռեր էին ու քար, անջրդի, անհող:

Միայն մողեսներն էին, որ սողում էին, ելնում, ծառի վրա պառկում, արևի դիմացը գալիս, տաքանում:

Եվ ինչպիսի՜ արև. այրո՛ղ, խանձող ու մրրկո՛ղ...

Ու սերմը խրված մնաց մի կտոր փոշուց կիտված չոր հողի մեջ անսնունդ, ճեղքի խորքումը:

Մնաց ու սպասեց:

Այժմ նա դեռ ուտելու պետք չուներ: Երկար կարող էր մնալ անսնունդ:

Պետք ուներ միայն տաք տեղի, ուր մի լավ կուչ գար, գարնանը մնար:

Եվ ժայռի ճեղքը վատ չէր: Փոքրիկ էր, կոկիկ, տաք ու ծածկված:

Ձյունն էլ որ շուտ գար, կմնար պարզվել, սպիտակ սավանի տակ կծկվել ու լավ քուն քաշել:

Այդպես էլ եղավ:

Սերմը մնաց այնտեղ, մի խոր անկյունում: Ձյունը շուտով եկավ, շերտ կապեց վրան. տաք-տաք վերմակի պես տակին սեղմվեց և մինչև գարուն մուշ-մուշ, քաղցր քնեց:

3

Անցան ամիսներ: Ցուրտ, ձյունոտ, թաց, քամոտ, անվերջ ամիսներ:

Ծառերը երկար սպիտակ մնացին, հետո սևացան, չոր ճյուղերովը սառնամանիքի տակ սրսրթացին, ծանր հառաչեցին, սառցով դողացին:

Ապա հալոցն ընկավ: Ջրերը ելան, միմյանց գլխովը տվին, չորս կողմը լվացին, ամեն բույս ու ծառի, ժայռ ու ապառաժի կուշտ-կուշտ խմեցրին, ցեխ էլ շինեցին:

Խմեցին նաև սերմերը հողում: Խմեցին երկար, զարթնեցին քնից: Հողը տաքացավ, հատիկների մեջ կյանքը շարժվեց, բողբոջ ու ծիլ, զանազան կողմեր, կանաչ կապեցին:

Ժայռի մեջն ընկած սերմը նույնպես քնիցը ելավ: Գարնան արևից տաքացավ ու բացվեց, եղած ջրերով ծարավը հագեցրեց, սնունդ ստացավ մի կտոր հողից, և կամաց-կամաց ծիլը արձակեց, լույս աշխարհ ելնել, ապրել նա ուզեց:

4

Մինչ նա այդպես աչքն էր բաց անում, իր ճեղքից ոչ հեռու, երկու քարերի մեջ, վաղ-գարնան, բուսնում էր մի սեզ:

Մի պարզ, հասարակ, փոքրիկ խոտի շյուղ, որի սերմը ո՞վ գիտի որտեղից եկել-ընկել էր, մնացել այնտեղ:

Հող չկար: Եղածը ոչինչ, հազիվ մի հատիկ լիներ: Բայց սեզը բուսել էր, ապրում էր, շնչում:

Ապրում էր, ճիշտ է, բայց որքան թուլակազմ, վտիտ: Հազիվ մի բարակ տերև:

Տխուր ու տրտում, մենակ, անընկեր, կարողացել էր երկու քարերի միջից սողալ-դուրս ելնել և բարակ ծղոտը լույսին օրորել, գոնե մի քանի օր ապրել:

Մի քանի օր, այո՛, և ո՛չ ավելի: Հենց որ տաքն ընկնի, քարերը, մանավանդ, երբ որ տաքանան, բոլոր այդպիսի խղճուկ սեզերը իսկույն կչորանան, կընկնեն, կմեռնեն:

Գարնան սկիզբն էր դեռ սակայն: Սեզը նո՛ր էր բուսնում: Դեռ դալար, զվարթ՝ ժպտում էր նա պայծառ արևին, գիշերվա ցողը դեռ կար և զովացնում էր անհոգ արմատին:

Եվ այդպես ուրախ, սեզը հաճույքով ցցում էր հասակը, ելնում ու աճում:

Մի բան միայն վատ էր, որ նա մինակ էր: Մինակ՝ այդ դաժան ապառաժի մոտ, խիստ, կնճռոտ քարերի մեջտեղ, մինակ, ոչ մի ընկեր, ոչ մի բարեկամ...

Եվ երբ այդպես մի օր էլ տխուր օրորվում էր նա ու նոր ծագող լույսի մեջ, ցողով փայլփլուն ընկեր է երազում, հանկարծ աչքը ընկավ ժայռի մութ ճեղքին և նկատեց ծառի նոր ելած թարմ ծիլը:

— Ա՛յ...— գոչեց նա,— դու ո՞վ ես, որտեղի՞ց եկար:

Ծառի ծիլը, որ արդեն կես մատնաչափ կար, ցած նայեց, տեսավ վտիտ սեզին ու ասավ.

— Բարև, բարեկամ, մի՞թե ուրախ չես, որ քեզ ընկեր եկա:

— Ո՛հ, ուրախ եմ, սաստիկ ուրախ, բայց ո՞վ բերեց քեզ և ինքդ ո՞վ ես:

Ծառի ծիլը ժպտեց: Ժպտեց, օրորվեց և այսպես երգեց.

— Ծառի ծիլն եմ ես:

Քամու ձեռքովը ելա անտառից,

Թռա դաշտերից, անցա լեռներից,

Եկա քեզ դրկից:

Հետո երգը վերջացրեց և հարցրեց.

— Իսկ դու ո՞վ ես, ընկեր, որտեղի՞ց եկար:

— Օ՜հ,— ասավ սեզը.— երգել ես չգիտեմ, շատ նիհար եմ, մենակությունից էլ երգելը մոռացել եմ: Ծլել եմ այստեղ, իմ մոր կրծքից, մտել եմ հողի մեջ, քնել ձմեռը, այժմ ելել եմ և եղել տանս տերը:

— Ապրե՜ս: Դու ուրեմն տուն ունես այդտեղ:

— Ունիմ ինձ համեմատ: Մի կտոր հող է: Շատ պահանջկոտ չեմ ես:

— Տեսնում եմ... բայց իմ տեղը չափազանց նեղ է և ես ստիպվում եմ բոլոր ուժս գործ դնել, քարի կուրծքն մտնել և տեղս լայնացնել:

— Կարողանո՞ւմ ես այդ,— հարցրեց զարմացած սեզը:

— Դժվար է, բայց աշխատում եմ: Ուրիշ ճար չկա, թե չէ՝ կմեռնեմ:

— Ինձ բավական է իմ եղած տեղը,— խոսեց նիհար սեզը,— ավելին պետք չունեմ:

Իրավ որ խեղճը պետք չուներ:

Ծիլը սեզին նայեց: Թշվառը մինչև իսկ մի րոպե անշարժ, ոտքերի վրա ամուր կանգնել չէր կարողանում:

Անդադար թեթև շունչից օրորվում էր, ցած ընկնող հիվանդի նման:

Ծիլը շատ խղճաց նրան:

— Ա՜խ,— մտածեց նա,— մեկ շո՜ւտ մեծանամ ու այս դաժան քարերին ջարդեմ, դեն ձգեմ, հող տամ բոլոր բույսերին, նույնիսկ թուլակազմ, վտիտ սեզերին:

Իսկ սեզը նիհար ոտի վրա գնում էր գալիս, շարժվում ու ժպտում: Կասես հիվանդ մանուկ լիներ, անուշ ու մեռնող ժպիտը դեմքին:

— Ինչ որ լինի,— խոսեց նա մեղմիկ,— գալուստդ բարի՛, չաղլիկ բարեկամ, էլ մի՛ թողնի որ մինակ մնամ. այստեղ եղիր գոնե մինչև մեռնելս: Երկար չի քաշի, մի քանի օր ևս, և ես կդեղնեմ ու գետին կընկնեմ... Օ՜հ, մենակ, սակայն, շա՜տ վատ է. տխո՜ւր, անխոս, անսիրտ քարերի մեջ… Եվ երբ գան վերջին օրերս, գոնե մոտս եղիր, բարեկամական դեմքիդ թող նայեմ ու այնպես մեռնեմ...

— Խե՜ղճ, խե՜ղճ...— մտածեց ծիլը և քիչ մնաց լար:

— Իսկ մի՞թե դու երկար չես ապրում,— հարցրեց նա հուզված:

— Հազիվ մի քանի օր... էհ, ապրում ենք, որքան կարող ենք... Իսկ դո՞ւ, չաղլի՛կ ընկերս:

— Ե՞ս... — չկարողացավ զսպել հպարտությունը և սկսավ ծիլը,— Օ՜հ, երկար, շա՜տ երկար, որքան ուզենամ...

— Եվ միշտ այդպես փոքրի՞կ, բայց չաղ ու թխլիկ:

— Օ՛, ո՛չ, կանցնեն տարիներ, ես կմեծանամ, շա՜տ կմեծանամ, ճյուղեր կարձակեմ, մեծ բուն կբռնեմ և արմատներս... Օ՛հ, այո՛, կխրեմ այս ժայռերի տակ, կփշրեմ քարերը... Կամ պիտի մեռնեմ շուտով և կամ այս բոլոր հողերը գրավեմ, քարերը ջարդեմ:

5

Եվ երկու բույսերը շատ բարեկամացան:

Ծիլը, սակայն, գեր ու ամրակազմ, օրեցօր տեսնում էր տխուր, որ սեզ ընկերը ծյուրվում էր, դեղնում, մահվան մոտենում:

Բայց զվարթ ու նիհար բույսը ուրախ էր, որ ընկեր ուներ, և միշտ խոսում էր, անհոգ ծիծաղում, ծիլին զբաղեցնում:

Ծիլը չկարծես պարապ էր մնում:

Նա մեծանում էր. ինչպես մեծանում: Նրան տեղ էր պետք, ճեղքը նեղ էր գալիս, հողը բավականություն իսկի չէր տալիս:

Ի՞նչ աներ: Մնում էր՝ ամբողջ ուժը հավաքեր, դեմ ընկներ ժայռին, մեծ համբերությամբ ծակեր նրա կողքը, արմատի թելերով ճեղքեր որոներ, ճանկերը թափով խրեր ու պարզեր և տեղ հափշտակեր, տուն-տեղ գրավեր:

Ու պե՜տք էր տեսնել նրա ջանքն ու աշխատանքը, անվե՛րջ, անդադրում, գիշեր ու ցերեկ, մեծ տոկունությամբ, քարից ավելի պինդ կամքով, անվերջ համառությունով:

Սեզը զարմացած, ուղղակի ապշած՝ օրորվում էր մոտը և գործը դիտում: Եվ լավ էր տեսնում, թե ինչպես ծիլը օրը մի մազ արմատից, շաբաթը մի չնչին տարածություն մղում էր քարի մեջ, գնում ու գնում: Մյուս կողմից էլ ծծում էր ցողից, ամեն կաթիլ ջրից, քամու բերած փոշուց, նույնիսկ քարի շերտերից և աճում էր, գիրանում, ամրակազմ դառնում:

— Այդպե՛ս, ապրե՛ս դու,— կանչում էր սեզը ոգևորությունով.— այդպե՛ս, գիրո՛ւկ բարեկամ, քայլի՜ր, առաջ գնա, փշրիր ու ջարդի՛ր այդ ապառաժը... Ու եթե ես չեմ տեսնի քո հաղթությունը, բույսերի համար ապագա լավ օրերը, գոնե որդիներս տեղ կունենան առողջ աճելու, երկար ապրելու:

Ծիլը քաջալերվում էր փոքրիկ բարեկամի այդ քաղցր խոսքերից, երկաթի նման կուռ գլխովը, իր նորարձակ ճյուղերով, քարն էր փշրտում, լայն անցք բաց անում, իսկ ոտները, իր արմատները խոր էր նա մղում, ապառաժը ճեղքում, ճեղքում ու խախտում:

6

Բայց սեզը մեռավ:

Մի տաք, տոթ օրվա երեկոյան կանչեց բարեկամին, օրորաց, ժպտեց մի վերջին անգամ, հետո կռացավ մի կողմի վրա, դեղնեց, թուլացավ ու գետին ընկավ:

Այլևս չկանգնեց:

Ծիլը տխուր ու ընկճված՝ մի րոպե ընդհատեց իր աշխատանքը, նայեց բարեկամին, երթաս բարևն ասավ ու լացավ վրան:

Լացավ և գոչեց.

— Հանգիստ քեզ, իմ լա՛վ, փոքրիկ բարեկամ. մեռար առանց տեսնելու իմ հաղթությունը: Բայց քո որդիները, ես հույս ունեմ, շատ հող կունենան, և կանաչ կկապեն այս ժայռն ու քարերը:

Եվ տեսավ, որ սեզի սերմերը ընկած մնացին չոր քարի զանազան մանր խորշերի մեջ:

— Ոչինչ, քնեցեք այդտեղ, իմ բարեկամի պստիկ ձագուկներ. գարունը երբ գա՝ տե՛ղ էլ կունենաք, սնունդ էլ հետը:

Ապա ցնցեց գլուխը, ուժերը նորից կիտեց, ճանկերը սրեց և գործը շարունակեց...

7

Անցան ամիսներ, ապա՝ տարիներ, շա՜տ-շա՜տ տարիներ:

Ծիլը ո՜չ մի օր իր աշխատանքը չկանգնեցրեց: Ձմեռը քնում էր ու կազդուրվում, իսկ երբ գարունն էր գալիս — ելնում էր աշխույժ, նոր ուժ ստացած և ճանկերը պարզած՝ գործը սկսում:

Եկան ցուրտ օրեր, փչեցին դաժա՛ն, սառցնող քամիներ, արևը այրեց, երբեմն օրերո՛վ անձրև չտեղաց: Ծիլը ծարավ մնաց, քիչ մնաց չորանար և հուսահատվեր: Բայց սիրտը ամրապնդեց, դիմացավ և երբ կազդուրվում էր նորից, գնաց ու գնաց ապառաժը փորեց, խորերը մտավ:

Տարիների ընթացքում նա այնքան բազմաթիվ արմատ արձակեց, այնպես լավ ճանկեց կարծր ժայռերին, այնքան խոր մղեց ամուր ոտները, որ մնում էր քիչ էլ մեծանար, բունը հաստացներ, հետո ուժ տար ու քարերը փշրեր:

Այդպես էլ եղավ:

Լուռ և անընդհատ, համառ աշխատանքով, թե՛ ուժ ձեռք բերեց և թե՛ թշնամուն լավ շրջապատեց: Հետո ցնցեց իրեն, հսկա ուսերը, կուրծքը դեմ տվավ, սեղմեց ու սեղմեց:

Քարերը շարժվեցին, ապառաժը սարսեց, տեղիցը ելավ, ապա մեծ ճեղքերը այս-այն կողմ՝ խոշոր բացվեցին, ծառի արմատներից դես-դեն գլորվեցին և այդ բոլորի մեջ ծիլը հաղթական, ամուր ծառ դարձած՝ ելավ ու ցցվեց, գլխին դիզացած մազերը ցնցեց:

— Ահա՛, վերջապես,— գոչեց նա ուրախ.— վե՛րջ ապառաժների, վե՛րջ կարծր քարերի: Եկե՛ք այժմ շուրջս, սե՛զ, խո՛տ, ծա՛ռ ու ծաղիկներ, եկեք աճեցե՛ք. աճեցեք, մեծացեք, ապրեք, ամենքիդ սնունդ և հող շատ կա այստեղ: Եկեք, մի՛ վախեք...

Սերմերը ելան, քամու բերած հատիկները շատ հող ունեցան, աչքերը բացին, ապրիլ կամեցան:

Մինչ այդ, նոր ծառը անընդհատ մեծացավ, խոշորացավ, բոլոր քարերին հեռու շպրտեց ու մեծ ապառաժին երկու կես արավ:

Երկու կես արավ և ի՞նչ նա տեսավ:

Հանկարծ քարի տակից լսվեց մի շշուկ, ապա գլգլաց ու առաջ վազեց առատ ջրով լի մի վճիտ աղբյուր, որ կչկչալով զգվեց ծառի արմատը, շրջան գործեց ամեն տեղ, գետնի ծարավը հագեցրեց ու անցավ գնաց:

Գնաց, բայց որտեղից որ անցավ՝ սերմերը ծլեցին, սեզը բարձրացավ, նոր ծառերի բողբոջները ելան, ծաղիկները իրենց թերթերը բացին, անուշ հոտերովը աշխարհը լցրին, թռչուններն եկան, գարուն երգեցին, նոր կյանք ավետեցին...

Ահա, նայիր այժմ: Տե՛ս այն խոշոր ծառը, որ ապառաժին երկու կտոր է արել, մեջիցը ելել: Տե՛ս, նրա շուրջը ծնել է կյանքը, կչկչում է վճիտ աղբյուրը,— խմիր նրա ջուրը: Տես դես-դեն շպրտված խոշոր քարերը, նրանց վրա անգամ բույսերը ելել՝ կանաչ են կապել, ծառ-ծաղիկ բուսցրել, կյա՛նք են ստեղծել...